ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/352

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Վալլի Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21115-2021 գրությամբ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 17.12.2021թ. թիվ 08-492 գրության հիման վրա, 21.12.2021թ.-ին «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.12.2021թ.-ին:

23.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/352 համարի ծածկագիրը:

29.12.2021թ.-ին և 20.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.01.2022թ.-ին:

2. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 17.12.2021թ. թիվ 08-492 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտնելով հետևյալը.

«<<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն 16.11.2021թ. հայտարարել էր ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների գնման ընթացակարգ: Տվյալ ընթացակարգին մասնակցելու համար հայտեր էին ներկայացրել <<ՎԱԼԼԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն և Ա/Ձ Սարգիս Ասատրյանը: 13.12.2021թ. կայացած նիստում Ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել էր անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Այնուհետև, սահմանված կարգով մասնակիցներին ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու համար, սակայն սահմանված ժամկետում <<ՎԱԼԼԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն անհամապատասխանությունները շտկել է մասնակի, իսկ Ա/Ձ Սարգիս Ասատրյանը սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել (փոփոխված համապատասխան փաստաթուղթը ներկայացրել է 16.12.2021թ-ին): Արյունքում գնահատող հանձնաժողովը 15.12.2021թ. կայացած նիստին որոշել է մերժել <<ՎԱԼԼԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտը բացառությամբ 89-րդ չափաբաժնի և Ա/Ձ Սարգիս Ասատրյանի հայտը

ամբողջությամբ՝ առաջարկված ապրանքների ամբողջական բնութագրերը հրավերով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ: Կից ներկայացնում ենք ընթացակարգի հրավերի, գրանցամատյանի և գնահատող հանձնաժողովի համապատասխան նիստերի արձանագրությունների և ընկերությունների կողմից ներկայացված հավելվածների պատճենները:

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ կետը, խնդրում ենք նախաձեռնել գործընթաց <<ՎԱԼԼԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին և Ա/Ձ Սարգիս Ասատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.12.2021թ.-ի գրությամբ դիմել է «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21115-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/352 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 16.11.2021թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.12.2021թ.-ին նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.2-ը ստորագրված չէ այն ներկայացնողի կողմից և բացակայում է լրացնողի համապատասխան լիազորությունը հաստատող փաստաթուղթը բացակայում է իրական շահառուի մասնակցության տոկոսը, տեսակը նշած չէ, լրացված չեն կարգավիճակի մասին տեղեկությունները, կոնտակտային տվյալները: Հավելված 1.1-ում բոլոր չափաբաժիններով արտադրողի և ապրանքային նշանի սյունակներում նշված չեն համապատասխան տվյալներ, այսինքն բացակայում է արտադրողի և/կամ ապրանքային նշանի տվյալները:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.12.2021թ.-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի wallygroup2021@gmail.com էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 15.12.2021թ.-ին նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կրկին ներկայացրած հավելված 1.1-ով, բացառությամբ 89-րդ չափաբաժնի, մնացած բոլոր չափաբաժիններով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովը որոշել է «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, բացառությամբ 89-րդ չափաբաժնի, մերժել:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21115-2021 գրությամբ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 16.11.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.8-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն

հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 16.11.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.12.2021թ.-ին նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հավելված 1.2-ը ստորագրված չէ այն ներկայացնողի կողմից և բացակայում է լրացնողի համապատասխան լիազորությունը հաստատող փաստաթուղթը, բացակայում է իրական շահառուի մասնակցության տոկոսը, տեսակը նշած չէ, լրացված չեն կարգավիճակի մասին տեղեկությունները, կոնտակտային տվյալները: Հավելված 1.1-ում բոլոր չափաբաժիններով արտադրողի և ապրանքային նշանի սյունակներում նշված չեն համապատասխան տվյալներ, այսինքն բացակայում է արտադրողի և/կամ ապրանքային նշանի տվյալները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել

հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձն Հանձնաժողովի 15.12.2021թ.-ին նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրել է, որ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կրկին ներկայացրած հավելված 1.1-ով, բացառությամբ 89-րդ չափաբաժնի, մնացած բոլոր չափաբաժիններով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, որպիսի պայմաններում Հանձնաժողովը որոշել է «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, բացառությամբ 89-րդ չափաբաժնի, մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում

որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել

և հավաստել է, որ բավարարում է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2021թ.-ի թիվ 26/26-1/21115-2021 գրությամբ «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/352 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վալլի Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**